

## ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐՐԱԿՈՐԿԱԾ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

### Լալա Գրիգորյան

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ*

Ընդհանուր իրավունքի ընտանիքում հանցակցության ինստիտուտը սկզբնավորվել է 17-18-րդ դարերում, իսկ սկսել է ձևավորվել ավելի վաղ՝ արակտիկայի և գիտական աշխատանքների հիման վրա, որտեղ գործել է մի քանի անձանց համատեղ հանցանք կատարելու համար պատասխանատվության ենթարկելու սկզբունքը:

Ընդհանուր իրավունքի համաձայն՝ գոյություն ունի հանցանքը կատարողի 4 տեսակ՝ առաջին աստիճանի կատարող, երկրորդ աստիճանի կատարող, հանցակից մինչև հանցանքի կատարումը և հանցակից հանցանքը կատարելուց հետո<sup>1</sup>: Անգլիական քրեական իրավունքում գործում է բավականին հին կանոն՝ այսպես կոչված «անմեղ գործող անձի» պատասխանատվության հարցը: Ջեյմս Ֆ. Ստիֆենի «Դիգեստներ» համաձայն՝ առաջին աստիճանի կատարող է համարվում նաև այն անձը, ով հանցանքը կատարում է առանց մեղքի գործող անձի միջոցով<sup>2</sup>:

Ըստ այդ կանոնի՝ անմեղ գործող անձի կատարած հանցանքի համար պատասխանատվություն է կրում նրան օգտագործողը, և փաստորեն վերջինս էլ դառնում է հանցանքի կատարող:

Ֆրանսիական քրեական իրավունքում միջնորդավորված կատարումը ստացել է հետաքրքիր անվանում՝ պատասխանատվություն ուրիշի արարքների համար: Քրեական իրավունքում ընդունված է անձնական պատասխանատվության սկզբունքը, սակայն դրան զուգահեռ քննարկվում է այլ անձի կատարած արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկվելու հարցը: Ֆրանսիական քրեական իրավունքում ընդունվում է մի անձի քրեական պատասխանատվության հնարավորությունը մեկ այլ անձի հանցավոր արարքների համար: Հենց նմանատիպ դեպքերն էլ պատկանում են ուրիշի արարքների համար քրեական պատասխանատվության ինստիտուտին:

Ֆրանսիայի գործող քրեական օրենսգրքի ընդունմամբ ֆրանսիական ծագում ունեցող և այլ երկրների իրավական համակարգերում ամրագրում ստացած այս ինստիտուտը (օրինակ՝ Անգլիայում այն կոչվում է սուբստիտուտիվ պատասխանատվություն<sup>3</sup>) դիտվում է որպես բացառություն անձնական պատասխանատվության սկզբունքից: Պետք է նշել, որ մի խումբ ֆրանսիացի իրավաբաններ այստեղ անձնական պատասխանատվության սկզբունքի խախտում չեն տեսնում, քանի որ, ըստ նրանց, «...այլ անձի արարքների համար պատասխանատվությունը իրականում անձնական

<sup>1</sup> Տե՛ս *Г. А. Есаков, Н. Е. Крылова, А. В. Серебренникова*. Уголовное право зарубежных стран. Учебное пособие. М., 2011, էջեր 234-235:

<sup>2</sup> Տե՛ս *Stephen J. F. A. Digest of the Criminal Law (Indictable Offences)*/9<sup>th</sup> ed., by Lewis F. Sturge. L., 1950, էջ 15:

<sup>3</sup> Սուբստիտուտիվ պատասխանատվությունը անձի պատասխանատվությունն է այլ անձի անփութության համար:

պատասխանատվություն է կա՛մ այն պատճառով, որ անձը չի կատարել հանցավոր արարքն օբյեկտիվորեն կատարողի նկատմամբ հսկողության պարտականությունը, կա՛մ այն պատճառով, որ այդ անձն ինքն է հանցավոր արարքի անուղղակի կատարողը»<sup>1</sup>:

Այսինքն՝ անձը կատարում է հանցավոր արարք այլ անձի միջոցով, ով գործում է առանց մեղքի: Այս ինստիտուտի նշանակությունն այն է, որ դրա շնորհիվ լրացվում է Ֆրանսիայի քրեական իրավունքում առկա բացը, որը թույլ չի տալիս ընդհանուր կանոնով պատժել անգործությունը: Վերջինս քրեական պատասխանատվության է հանգեցնում միայն այն դեպքում, երբ ուղղակիորեն ամրագրված է օրենքում: Ուրիշի արարքների համար քրեական պատասխանատվության ինստիտուտի առկայությունը հնարավորություն է տալիս պատժելու այն անգործությունը, որը հատուկ չի նշվում նորմատիվ իրավական ակտում: Օրինակ՝ գործատուն կարող է պատասխանատվության ենթարկվել իր պարտականությունները չկատարելու հետևանքով իր ենթակաների կատարած իրավախախտման համար, եթե գործատուն, ինչպես ասում են ֆրանսիացի իրավաբանները, համարվում է նրանց արարքների «երաշխավորը»:

Դատական պրակտիկայում եղել է դեպք, երբ իրավաբանական անձի տնօրենը դատապարտվել է ընկերության կողմից արտադրած օդափոխիչ համակարգի անորակության համար՝ չնայած այն հանգամանքին, որ այդ աշխատանքները հանձնարարված են եղել իր ընկերության համապատասխան աշխատակիցներին: Անշարժ գույքի սեփականատերերը պատասխանատվություն են կրել նաև վարձու աշխատողների կողմից օբյեկտների մաքրման աշխատանքները խախտումներով կատարելու համար: Խոսքը, իհարկե, այնպիսի խախտումների մասին է, որոնք մարդկանց առողջությանը վնաս են պատճառել կամ այլ վտանգավոր հետևանքներ են առաջացրել: Այս դեպքում գործատուները ենթարկվել են քրեական պատասխանատվության հանցանքն անմիջականորեն կատարելու համար: Նման դեպքերում քրեական պատասխանատվությունը տարբեր ձևերով է վրա հասնում սեփականատերերի, գործատուների և այն անձանց համար, ովքեր կարող են պատասխանատվություն կրել այլ անձանց արարքների համար: Մի դեպքում դատարանները նրանց համարում են համակատարողներ, մեկ այլ դեպքում՝ հանցակիցներ: Որոշ դեպքերում ղեկավարն ազատվում է պատասխանատվությունից, եթե նրա լիազորությունները պատվիրակված են եղել ենթակային: Ղեկավարը չի ենթարկվել քրեական պատասխանատվության նաև այն դեպքերում, եթե նա ապացուցել է, որ այլ անձի կողմից կատարած իրավախախտման մեջ իր մեղքը (նույնիսկ անզուլությունը) բացակայում է<sup>2</sup>:

Գերմանիայի քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 3-րդ բաժնի 3-րդ գլուխը վերաբերում է հանցակցության ինստիտուտին: Գերմանական քրեական իրավունքում առանձնացվում է հանցավոր արարքը համատեղ կատարելու երկու ձև՝ կատարում և օժանդակություն ու դրոշություն: Կատարողի ինստիտուտը նախատեսված է քրեական օրենսգրքի 25 պարագրաֆում: Այս նորմի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու կատարողի 3 տեսակ. անձ, ով հանցանքը կատարել է միայնակ, ով հանցանքը կատարել է միջնորդավորված, և ով հանցանքը կատարել է մեկ այլ անձի հետ: Այստեղից հետևում է, որ կատարող է համարվում նաև այն անձը, ով հանցանքը կատարում է մեկ այլ անձի միջոցով, որը հանդիսանում է հանցավոր արարքի կատարման «գործիք»:

<sup>1</sup> St' u *Stefani G., Levasseur G., Bouloc B.* Droit pénal general. 15e éd. P., 1995, էջ 336:

<sup>2</sup> St' u *Г. А. Есаков, Н. Е. Крылова, А. В. Серебренникова*, Նշվ. աշխ., էջ 254-255:

Անմեղ գործող անձի կանոնը հայտնի է նաև մուսուլմանական քրեական իրավունքին, այսինքն՝ հանցագործության կատարումը այնպիսի անձանց միջոցով, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության (մանկահասակ, անմեղսունակ): Այդպիսի դեպքերում պատասխանատվությունը կրում է հանցագործության կազմակերպիչը, իսկ անմիջական հանցանք կատարողը կազմակերպչի ձեռքին դիտվում է որպես գործիք<sup>1</sup>:

Ռուսական քրեական իրավունքում ևս միջնորդավորված կատարումը ավանդաբար քննարկվել է հանցակցության ինստիտուտի շրջանակներում: Այսպես՝ ՌԴ քրեական օրենսգրքի 33 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցագործությունը կամ հանցանքի կատարմանը անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ միասին, ինչպես նաև այն անձը, ով հանցանքը կատարել է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության՝ տարիքի, անմեղսունակության կամ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանգամանքների ուժով: Այսպիսով, կատարողն առաջին հերթին այն անձն է, ով անմիջականորեն իրականացնում է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցակազմ: Դրանով կատարողը տարբերվում է դրոշից և օժանդակողից: Ռուսական քրեական իրավունքը ավանդաբար պահպանում է հանցագործության կատարողի օբյեկտիվ ընկալումը: Պետք է նշել, որ 33 հոդվածում առաջին անգամ ամրագրվել է միջնորդավորված կատարումը (պատճառումը): Ջարգացնելով տրված սահմանումը՝ կարելի է նշել, որ կատարում են համարվում ոչ միայն անմիջականորեն հանցանք կատարելը կամ կատարելու համար տարբեր առարկաներ, գործիքներ կիրառելը, այլև այդ նպատակով մարդկանց օգտագործելը, ովքեր հանդիսանում են հանցագործության գործիք:

Սակայն վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռուս հեղինակների մեծ մասը առաջարկում է հանցագործության միջնորդավորված կատարման օրենսդրական ձևակերպումը տալ ինքնուրույն հոդվածով՝ առանձնացնելով ՌԴ քրեական օրենսգրքի՝ հանցագործության կատարողի սահմանումը բնորոշող 31 հոդվածից: Ռուսական քրեական իրավունքում տեսակետ է արտահայտվել նաև, որ միջնորդավորված վնասը հնարավոր չէ պատճառել հատուկ սուբյեկտով հանցագործությունների դեպքում, օրինակ՝ պաշտոնեական և զինվորական հանցագործությունների ժամանակ, ինչպես նաև այն ժամանակ, երբ սուբյեկտին բնորոշ են որոշակի ֆիզիոլոգիական հատկանիշներ, օրինակ՝ բռնաբարության դեպքում<sup>2</sup>:

Կարծում ենք, որ հիշյալ մոտեցումը ամբողջությամբ ճիշտ չէ և չի արտացոլում հանցագործության միջնորդավորված կատարման բովանդակությունը, քանի որ հատուկ սուբյեկտով որոշ հանցագործությունների դեպքում միջնորդավորված կատարումը չի բացառվում: Այսպես, օրինակ, բռնաբարության դեպքում միջնորդավորված կատարումը հնարավոր է, երբ քրեական պատասխանատվության ենթակա տղամարդը օգտագործում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած արական սեռի ներկայացուցչի, ով կնոջ հետ բռնությամբ բնական սեռական հարաբերություն է ունենում: Բերված օրինակում թեև հանցագործությունը հատուկ սուբյեկտով է, սակայն գտնում ենք, որ միջնորդավորված կատարումն առկա է:

Ռուսական գրականության մեջ արտահայտված մեկ այլ տեսակետի համաձայն՝

<sup>1</sup> Տե՛ս Նույն տեղը, էջ 259:

<sup>2</sup> Տե՛ս Уголовное право. Общая часть. Учебник для вузов. Ответственные редакторы-доктор юридических наук, профессор И.Я. Козаченко и доктор юридических наук, профессор З. А. Незнамова. М., 1998, էջ 238:

հանցագործության միջնորդավորված կատարումը բնութագրվում է.

1. անձը բնութագրող հատկանիշներով (անմեղսունակություն, տարիք),
2. հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ սխալով, եթե այն ձևավորվել է կատարողի կողմից, կամ վերջինս օգտագործել է այն,
3. ֆիզիկական կամ հոգեբանական բռնությամբ, որն անձին ստիպել է գործել սեփական կամքին և ցանկությանը հակառակ,
4. իշխանության և ենթակայության հարաբերություններով (հրամանի կատարում)<sup>1</sup>:

Սակայն կարծում ենք, որ այս ցանկը թերի է. մասնավորապես նշված չէ միջնորդավորված կատարման հնարավորությունը հատուկ սուբյեկտով հանցագործության դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ օբյեկտիվ կողմն իրականացնողը գործել է անզգուշությամբ կամ օգտագործվել է այնպիսի անձի, ով մտավոր զարգացման մեջ հետ մնալու պատճառով չէր կարող գիտակցել իր արարքի նշանակությունը:

Ժամանակակից քրեաիրավական համակարգերում լուրջ տարբերություններ կան հանցակցության ինստիտուտի սահմանների վերաբերյալ: Երկրների մեծ մասում քրեական իրավունքի գիտությունը և օրենսդրությունը համատեղ հանցավոր գործունեությունը բաժանում են երկու խմբի՝ կատարում և հանցակցություն: Կատարում է համարվում կատարողի, համակատարողի և միջնորդավորված կատարողի գործունեությունը, իսկ հանցակցությունը օժանդակողի և դրոշի արարքներն են: Հանցակցությունն այստեղ հանցագործությանը մասնակցության ինստիտուտի մի մասն է (համակատարման հետ): Տեսությունն ու օրենքը հստակ տարանջատում են երկու՝ միմյանցից տարբերվող եզրույթներ՝ «կատարողներ» և «հանցակիցներ»: Նման մոտեցումը մասնավորապես տարածված է Անդորայում, Արգենտինայում, Գանայում, Գվատեմալայում, Իսպանիայում, Կոլումբիայում, Կուբայում, Լատվիայում, Հոլանդիայում, ԱՄՆ-ում, Էստոնիայում և մի շարք այլ երկրներում<sup>2</sup>:

ԱՄՆ-ի այն նահանգների քրեական օրենսգրքերում, որոնցում հանցակիցներին տեսակների բաժանելը բացակայում է, նրանց բոլորին անվանում են «հիմնական մասնակիցներ»: Օրինակ՝ Կալիֆոռնիայի նահանգի քրեական օրենսգրքի հոդված 31-ը սահմանում է, որ «այն բոլոր անձինք, ովքեր հետաքրքրված են հանցագործության կատարմամբ, անկախ այն հանգամանքից՝ հանցագործությունը կատարում են անմիջականորեն, թե օժանդակում են դրա կատարմանը, կամ իրենք չեն մասնակցում հանցանքի անմիջական կատարմանը, բայց խորհուրդներ են տալիս կամ հարում են հանցանքի կատարմանը, ինչպես նաև այն բոլոր անձինք, ովքեր օգնում, խորհուրդներ, ցուցումներ են տալիս կամ դրդում են մինչև 14 տարեկան երեխաներին, լուսնորդներին կամ տկարամիտներին հանցագործություն կատարել, կամ ովքեր խաբեությամբ, հարկադրանքով, ուժով կամ հարբածության վիճակն օգտագործելով կամ այլ եղանակով ստիպում են որևէ անձի կատարել ինչ-որ հանցանք, կամ ովքեր սպառնալիքի, վտանգի ենթարկելու, հրամանի կամ բռնության միջոցով ստիպում են մեկ այլ անձի կատարել ցանկացած հանցագործություն, հանցագործության կատարման հիմնական մասնակիցներ են»<sup>3</sup>:

Հայ հին իրավունքին ևս հայտնի էր հանցակցության ինստիտուտը: Մ. Գոշի Ղատաստանագրքում պատիժներ էին սահմանված գողերի և նրանց հարողների համար,

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 238:

<sup>2</sup> Տե՛ս *Додонов В. Н.* Сравнительное уголовное право. Общая часть: Монография / Под общ. и науч. ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ С. П. Щербы. М., 2010, էջ 190:

<sup>3</sup> Տե՛ս *Крылова Н. Е., Серебренникова А.В.* Уголовное право современных зарубежных стран (Англии, США, Франции, Германии): Учебное пособие. М., 1997, էջ 109:

ընդ որում՝ նախատեսվում էին միանման պատիժներ ինչպես գողություն կատարողների, այնպես էլ նրանց հարողների (կամակիցների) համար<sup>1</sup>:

1961 թվականի Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 17 հոդվածը վերաբերում էր հանցակցությանը, որտեղ տրվում էր նաև կատարողի հասկացությունը: Չնայած կատարողի օրենսդրական ձևակերպումից չէր բխում, որ հանցանքի միջնորդավորված կատարումը ևս կատարման տեսակ է, սակայն տեսությունն այլ բան էր փաստում: Այսպես, Ա. Թովմասյանի բնորոշմամբ, հանցակցության՝ որպես իրավաբանական ինստիտուտի բուն բնույթից բխում է, որ հանցակիցներ չեն կարող լինել ինչպես անմեղսունակները, այնպես էլ այն անծինք, ովքեր չեն հասել քրեական պատասխանատվության տարիքի: Այս դեպքերում գիտության մեջ ընդունված է խոսել, այսպես կոչված, «միջանկյալ պատճառման», «միջանկյալ մեղսայնացման», բայց ոչ հանցակցության մասին: Սա նշանակում է, որ հանցակցություն չի լինի, երբ երկու կամ ավելի անմեղսունակներ այս կամ այն հանրավտանգ արարքն են կատարում, կամ երկու կամ ավելի փոքրահասակներ նույնանման հանցանքներ են կատարում, կամ մեղսունակ անձը անմեղսունակին կամ անչափահասին, ավելի ճիշտ՝ փոքրահասակին հակում է հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը: Այստեղ մեղսունակ անձը պատասխանատվության կենթարկվի ոչ թե հանցագործության դրդչության համար, այլ որպես կատարող, քանի որ անմեղսունակներն ու փոքրահասակները նրա համար գործիքի դեր են կատարել<sup>2</sup>:

Օրենսդրական այս բացը լրացվեց 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի ընդունմամբ, որի 38 հոդվածի 2-րդ կետը, տալով կատարողի հասկացությունը, կատարման տեսակ դիտեց նաև հանցանք կատարելը այլ՝ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզուլության: Փաստորեն հանցագործության միջնորդավորված կատարումը օրենսդրական ամրագրում ստացավ և համարվեց կատարողի տեսակներից մեկը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է առանձնացնել հանցագործության միջնորդավորված կատարման հետևյալ հնարավոր դրսևորումները՝

1. քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի օգտագործումը,
2. անմեղսունակության վիճակում արարքը կատարող անձի օգտագործումը,
3. այսպես կոչված՝ տարիքային անմեղսունակության վիճակում գտնվող անձի օգտագործումը,
4. ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գտնվող անձի օգտագործումը,
5. ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արարք կատարող անձի օգտագործումը,
6. հատուկ սուբյեկտի կողմից տվյալ հանցագործության սուբյեկտ չհամարվող անձի օգտագործումը,
7. հրամանի կամ կարգադրության հիման վրա առանց մեղքի կամ անզուլությամբ գործող անձի օգտագործումը,
8. փաստական սխալի ազդեցությամբ առանց մեղքի կամ անզուլությամբ գործող անձի օգտագործումը:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ հանցագործության միջնորդավորված կատարման նշված դեպքերը ամրագրել ՀՀ քրեական օրենսգրքում, ինչը կնպաստեր դրա հստակությանն ու արդյունավետ կիրառմանը:

<sup>1</sup> Տե՛ս Մխիթար Գոշ, Ղատաստանագիրք, Եր., 2001, Գլուխ ԾԲ, էջ 69:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Թ. Թովմասյան Սովետական քրեական իրավունք ընդհանուր մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 1971, էջ 395:

## УГОЛОВНОЕ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ОПОСРЕДСТВЕННОЕ СОВЕРШЕНИЕ ПРЕСТУПЛЕНИЯ

Лала Григорян

*Учебный ассистент кафедры уголовного права и криминологии  
юридического факультета академии Образовательного комплекса полиции РА,  
старший лейтенант полиции, аспирант Образовательного  
комплекса полиции Республики Армения*

Статья посвящена опосредственному совершению преступления, его характеристике, признакам и тенденции развития. Автор проводит историко-правовой анализ института опосредственного совершения преступления, а также анализирует нормы уголовного законодательства некоторых зарубежных стран, касающиеся данного вопроса. В частности, рассматриваются развитие и особенности института опосредственного совершения преступления в Армении, России, Англии, Франции, Германии, США. В заключительной части статьи автор выделяет возможные проявления опосредственного совершения преступления по уголовному кодексу Республики Армения.

## CRIMINAL RESPONSIBILITY FOR MEDIATED COMMISSION OF CRIME

Lala Grigoryan

*Training Assistant of the Criminal Law and Criminology Chair of the Law Department of the  
Academy of the Educational Complex of the Police of the Republic of Armenia,  
the Police Senior Lieutenant,  
Postgraduate student of the RA Police Educational Complex*

The article is related to the mediated commission of crime, its characteristics, features and tendencies of development. The author spoke about the legislative regulation of this issue in a number of countries and conducted the historical-legal analysis. In particular, the peculiarities of the mediated commission of crime in England, France, Germany, Russia, some states of the USA, as well as the mediated commission of crime by the past and current criminal legislations have been presented in details. As a result, the possible manifestations of the mediated commission of crime have been separated by the author.

**Բանալի բառեր՝** *հանցակցություն, կատարող, հանցագործության միջնորդավորված կատարում, հանցագործության գործիք, անմեղսունակ անձ, քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձ:*

**Ключевые слова:** *соучастие в преступлении, исполнитель, опосредственное совершение преступления, орудие преступления, невменяемое лицо, лицо, не достигшее возраста уголовной ответственности.*

**Key words:** *complicity, crime committer, the mediated commission of crime, crime tool, a not guilty person, person not reaching the age of criminal responsibility.*